

գանք տար դպրոցական ֆոնդին ոչ միայն իրանց կողէկներով այլ և իրանց խօսքով ու զբշով։ Մինչև այժմ այդ ուղղութեամբ քիչ բան է նկատում։ Երանի թէ այսուհետեւ մեր հասարակութեան զանազան իրաւերը և յատկապէս հայ ուսուցչութիւնն աւելի ներդործական մասնակցութիւն ունենար դպրոցական ֆոնդի կազմակերպման և իրադորժման մէջ։—

Գէորգեան Շեմարանի վարչութիւնը յայտնում է «Արարատ»-ի խմբագրութեան, որ Շեմարանի ուսուցչական խումբը մի համակրելի որոշում է արել-իր տարեկան ռաճիկների մի տոկոսը յատկացնել դպրոցական ֆոնդին։ Դա համակրելի է մասնաւոնդ նրանով, որ համերաշխութեան մի ակտ է ու ֆոնդին մասնակցելու մի օրինակելի միջոց։ Յանկալի է, որ մեր բոլոր դպրոցական և ազգային հասարակական մարմինների պաշտօնէութիւնները խմբովին, ընկերովի մասնակցէին այդ ազգային և կուլտուրական մեծ գործին։

Գէորգ Ալբունեան.

Մ Ա Ց Բ Ա Թ Ո Ւ

Խոմանովների Կայսերական տան իշխանութեան երեքարիւրամեայ յորելեանը մեծ շուքով ու հանդիսաւորութեամբ տօնուեց Մայր Աթոռում Ազգիս Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ փետրուարի 20-ին և 21-ին։

Ամսի 20-ին հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ կատարուեց ի յիշատակ Կայսերական տան բոլոր հանգուցեալ թագաւորների, որոնց անունները շարքով թուեց օրուայ պատարագիշ. Տ. Կարապետ եպիսկոպոսը, Ներկայ էին Նորին Սրբութիւն ամենայն Հայոց Կաթուղիկոսը, Մայր Աթոռի ամբողջ միարանութիւնը, Ս. Մինողի պ. պլուկուրորն ու բոլոր ծառայողները, Գէորգեան Հոգևոր ճեմարանի ուսուցիչներն ու աշակերտները, պ. զաւառապետը և այլ պաշտօնեան եր ու աղօթողների խուն բազմութիւնն

Յաջորդ օրը հանդիսաւոր պատարագ մատուցուեց և Կայսերական մաղթանք կատարուեց Վեհափառ Հայրապետի, միաբանութեան, ճեմարանի ուսուցիչների և աշակերտների, պ. պ. պրոկուրորի, զաւառապետե և այլ պետական և հասարակական պաշտօնեաների ու աղօթող ժողովրդի ներկայութեամբ։ Պատարագից Տ. Աշուած Կայսերական մաղթանքից առաջ Ս. Իջման սեղանից կարդաց Նորին Մեծութեան թաղաւոր Կայսեր նոյն օրը հրատարակած մանիթեսոր, որ Կովկասի Տ. Փոխարքան փութացել էր հեռագրով հաղորդելու Նորին Վեհափառութեան։

Ս. Պատարագից յետոյ ճեմարանում գրական-երաժշտական հանդէս տեղի ունեցաւ ի յիշատակ օրուայ մեծ տօնի, և յորելեանից ճեմարանի ուսուցիչներից բանախօսութիւններ արին պ. Ս. Մամիկոնեան՝ նիւթ ընտրելով Շումանովների Տունը Ռուսաց պատմութեան մէջ, պ. Պ. Սոտնիկեան ռվաթունական թուականների բարենորոգութիւնների մասին, երկուան էլ ոռւսերէն, և պ. Գ. Ալթունեանը Շուու ժողովրդի գերի մասին համաշխարհային պատմութեան մէջ, հայերէն, որ և լոյս է տեսնում ամսադրիս սոյն համարում։ Մէջ ընդ մէջ երգում էր Տ. Ռուրէն արեղայի ղեկավարութեամբ ճեմարանի աշակերտական խումբը ոռւսերէն և հայերէն երգեր, ինչպէս նաև արտասանուեցան մի շարք ոտանաւորներ, գարձեալ երկու լեզուով ևս, բոլորն էլ Ռուսաց գրականութիւնից։ Հանդէսը կազմակերպող մասնախումբն ամենայն բարեխըզնութեամբ աշխատել էր լաւ տօնել Մեծ Յորելեանը և ի նկատի էր ունեցել նաև տեղական ոռւս զաղութը, որով և ցերեկոյթին տիրող լեզուն պետականն էր։ Ներկայ էին բացի ճեմարանի ամբողջ ուսուցչական խմբից ու աշակերտներից և ուսանողներից նաև Մայր Աթոռի միաբաններից շատերը, պ. զաւառապետն ու ոռւս պաշտօնեաններ և ծառայողներ իրենց ընտանիքներով և Վաղարշապատի հայ մտաւորականներից բազմաթիւ անձինք։

Օրուայ Մեծ Յորելեանի պատճեռով Ս. Վարդանեանց ազգային-եկեղեցական տօնի սովորական հանդէսը ճեմարանում շկատարուեց, այլ փոխարինուեց մի ներկայացումով, որ արուեց նոյն օրը երեկոյեան։

Յորելեանական երկու օրն ևս վանքի և ճեմարանի բակում նոխ հրավառութիւն կար, որ և մեծ բաւականութիւն էր ժողովրդի խուռն բազմութեան համար։